

Աղաղակի անմուռնչ ձայնին,
Ո՛ր անցաւոր ազգք մարդկային
Առ ի գթալ տալ զողորմին:

Վախճանած է Հայոց (24 + 50 + 45 =) 1245 թուին և Քրիստոսի
(1245 + 551) = 1796 թուականին:

ԺԱ.

ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐԿ ԿԱԳԶՈՒԱՆՅԻ

Թաղուած է Վոսփորի Գուրուչէշմէ գիւղին Ս. Խաչ Եկեղեցիին պարտէզին
հարաւային կողմը. ունի փառաւոր շիրիմ, որուն վրայ կը կարդանք.

Մեծ վարդապետս՝ այս մեր ըզգօն, գերահըռչակ և ըզգաստ
Ծընեալ յերկրին կաղըզվանայ ութսունամեայ հանգեաւ աստ,
Ի փօզուզեանց համեստ զարմէն մաքրասընունդ բարերաստ
Դեռ մանկութեան Սուրբ հաւատովն բնաւորեալ ճոխիմաստ:
Ըզերա հաւատն ուզղազաւան ետես ի սա Սուրբ Հոգին
կոչեաց ի Ս. Էջմիածին լուսակառոյց նոր յԱզին.

Արար ըզսա անդ միաբան հայրապետացն առ ոտին
Եւ փայլեցոյց գերափառօք զեա արուսեակ առաւօտին:

Սրբոյ Գահնոյ ժիր գործակալ միշտ ուր ուրեք յաջողակ
Գեղեցկադէմ ահագնաձայն՝ եպիսկոպոս շնորհունակ:

Էր բանախօս աստուածաբան եկեալ Պօլսոյս նուիրակ,
Լուսաւորչիս դաւանութեան ուղիղ մտօք դատտիրակ:

Ի գործ կրկնակ նուիրակութեան բարւոք ծանեան բարեկարգ
Ջաքարիա արհիապանծս եղին Պօլսոյս Պատրիարգ:

Հըռչակեցաւ յոյժ ազգասէր և բարերախտ գերայարգ
Շինեալ զմանս եկեղեցիս և հիւանդաց երկու յարկ,

Յոյժ ճոխացոյց շատ գպրատունս յորս հաստատեաց վարժապետ
Հասոյց գեթնեակ եպիսկոպոս և չորեսին վարդապետ.

Ջանայր զուսումն ճոխել ազգիս նախնի Սրբոյ յար հանգէտ
Պահեաց հանգիստ զազգ մեր տարով քսան և վեց կացեալ դէտ.

Ջերգ Ս. Սահակ զփայտ վշտաց հոգըս Հայոց բարձեալ յուս
Յահէն պետիս՝ բոլոր հերձուածք բերանափակ տային խոյս.

Ազգամամբ հոգւոյ գիտեալ զիւր մահ խնդրեաց թագիլ շիրմիս կոյս
Ակն ունելով Սուրբ աղօթից՝ տամք ողորմիս շնորհալոյս:

Տապանագրիս մէջ յիշուած չէ՝ թէ ո՞ր թուականին վախճանած է այս Զաքա-
րիա Պատրիարքը: Բայց Սարգիս դպիր Սարաֆ Յովհաննէսեան իւր Պոլսական տե-
ղագրութեան մէջ այս մասին կը գրէ հետեւեալը.

« Եւ ի ՌՄԽԸ, մարտի ամսոյն հիւանդացաւ և ի բժշկաց ոչինչ օգտեալ մեռաւ
« լուծմամբ որովայնին մարտի ժամ, յաւուր ուրբաթի երկրորդ շաբաթի մեծի պատի